


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն  
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԻԱԳՐԻ  
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS  
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵՄԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲՆԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրի գումար համար տրեկ. ողջ դի. 80  
» » վեցամսեայ » 50  
Օս աւ իրենցմեք տարեկան ծրանք 25  
» » վեցամսեայ » 14  
Թիւր ստորի ծախսը խմբագրու-  
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-  
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԼՈՒՍԱԿՈՐԻՉԸ ԱՄԵՆՈՒՍ

Փորձուգալ Միքայէլ փաշայի յուզարկա-  
ւորութեանը՝ մեր Պատրիարքարանի կողմէն  
եպիսկոպոսի մը և քանի մը վարդապետներու  
Հոռմէական Հայոց Օրթոդոքս Լուսաւորչի ե-  
կեղեցին ներկայութիւնը ծանուցինք : Որչա՛փ  
հեռու կը գտնուինք այն օրերէն ուր Բերայի  
փողոցներէն արագաժապ կը տանէին հոռմէա-  
կան հայու մը դագաղը, արգիլելու համար  
լուսաւորչական եկեղեցականութեան յար-  
գանքին արտայայտումը : Հաղիւքսուորդ զար-  
մը անցած է անկից ի վեր և սակայն հիմա  
այդ թուականը մեզի մեր օրերէն դարեւու  
անջրպետով մը բաժնած կերելի :

Կրօնական տեսութիւնը չի կրնար Հայոց  
մէջ հաստատուն հիմ ձգել. մեր ազգային  
կեանքին պատմութեանը մէջ բողոքականի,  
լուսաւորչականի, կաթոլիկի խարականութիւ-  
նը վաղանցուկ դրուագի մը պէս պիտի անց-  
նի : Հայը կրօնամոլ միտք չունի. կրօնամոլու-  
թիւնը ժողովուրդի մը տահմային նկարագրին  
մաս կը կազմէ և հայը զօրեղ նկարագրով չէ  
ստեղծուած : Կրօնքի մէջ ամենքս ալ անոյշ  
սկեպտիկներ ենք. Հայաստան հայը սուրբե-  
րուն կը հաւատայ, վասն զի անոնք բժիշկ են  
ամեն ցաւերու, առ ի չգոյէ ուրիշ : Հայը իր  
եկեղեցին ջերմապէս կը սիրէ պատմական  
կեանքի մը յիշատակներով : Որ և է կրօնք  
Հայաստանի մէջ չէ կրցած անանկ խոր ար-  
մատ ձգել ինչպէս Եւրոպայի մէջ : Հայ կա-  
թոլիկները որոնք լուսաւորչականներու աչքին  
կրօնամոլութեան եղական նմանք կը համար-  
ուին, Պոլիս եկող եւրոպացի ճշմարիտ կաթո-  
լիկներուն աչքին անհաւատութեան մէկ մէկ  
տիպարներ կերեւան : Հոռմի ծանօթ դրոշմը  
չի կրցաւ փակչիլ հայուն յաղորդը հոգիին.  
ուր ալ տանիս այդ հոգին, Պապին ոտքին  
տակ թէ Լուստերի գրկին մէջ, միշտ այն թե-  
թեւ թուի հոգին է, կրօնամոլութեան ծան-  
րաբեռնութեանը տոկալու անկարող. ուստի  
կը դառնանք կը դառնանք ու նորէն ժպտե-  
լով «Եղբայր եմք մեր» կերգենք :

Եթէ քիչ մը ուշադիր ըլլանք, պիտի ան-  
դրադառնանք թէ իսկապէս արքայութեան և  
դժոխքի ինդիւններու համար չէ որ լուսաւոր-  
չական հայը կաթոլիկ և բողոքական հայուն  
հաշտ աչքով չէր նայեր : Ազգային եկեղեցիէն  
բաժանումը հայրենիքէն բան մը խորած ըլլա-

լու վշտով կը ճմլէր լուսաւորչական հայուն  
սիրտը : Եկեղեցին հայրենիքն էր, ամբողջ հայ-  
րենիքը. անկէ անշատումը՝ հայրենիքէ ան-  
շատում էր : Եկաւ օր մը սակայն որ ազգա-  
յնութեան հորիզոնն ընդարձակեցաւ. նոր սե-  
րունք մը սորվեցաւ թէ ազգութիւն մը բարդ-  
զանգուած է : Եւ մինչ Մատթէոս Պատրիարք  
մը հանդիսաւորապէս բանադրած էր բողոքա-  
կան հայը որ բաժնուած էր եկեղեցիէն, այ-  
սինքն հայրենիքէն, ուրիշ Մատթէոս Պատրի-  
արք մը, նախարկ էն աւելի «կրօնասէր», իր  
ներկայացուցիչները այդ բանադրեալ հոռմի  
պաշտօնատունը կը խրկէր փոխադարձ եղբայ-  
րասիրական այցելութեան : Ու օր մըն ալ հոռ-  
մէական եկեղեցիի մը մէջ՝ Հայրը, Տէրը, Պատ-  
ուելին մէկտեղ ցաւելու համար մեռնողի մը  
վրայ որ կաթոլիկ էր՝ բայց հայ էր, ինչպէս  
այդ եկեղեցին ալ թէեւ կաթոլիկ՝ բայց հայ.  
«Չ ապաքին կը նշանակէ թէ Լուսաւորչի հովա-  
նիին տակն ենք. և Լուսաւորչը ամենուան է,  
ու մենք ամենքս իրենք :

ՊԶՏԻԿ ԷԶԵՐ

Սրտիս գանգատը զոր Ռատտակն կը յայտնէր  
անցեալ օր, տղարանի գրեթե անբաւականութեա-  
նը մասին նորութեան արժէքը չունի մեր լրագրու-  
թեան ազգասիրի տարեգրութեանց մէջ :

Կը սիրէ՞ք հին պատմութիւնները :  
Յօշին, եթէ չեմ ուսումը, զարգացական արձա-  
կուրդէ մը օգտուելով, երեսփոխանական ժողովի  
մէկ նստին կերթայի, իր ունեւոր : Զեմ գիտեր  
ինչո՞ւ, ժողովն այն տանն Ղալաթիոյ եկեղեցին կը  
գումարէր իր նիստերը : Օրուան հաւարտման ձեռ-  
դակն մեծ դօրութիւնը փափագեանի հարցապն-  
դումն էր : Նենգալիտ ընդգլխախօս՝ բայց ոչ զօրիկ  
տողանդէ, չարսխաւ բայց պերճախօս, կարմիր բայց  
ոչ կարմիր : Մոլի երեսփոխանը անշահ բայց  
յոյժ շահեկան դէմք մըն էր ազգային շրջանակին  
մէջ : Ներսէս իր նախագահի տիպարին վրայ՝ selletteի  
վրայ էր այն օր, և կընդունէր որ, կուտի մը հոռ-  
միտատես ըլլալու մէջ — լուսաւորչի ըլլալ իսկ — չոր  
հաճոյք մը կայ միշտ. չէ՞ :

Հարցապնդման պատրուակը օր մը կրնամ մոռ-  
նալ, բայց ինչ որ յիշողութեան մէջ բեւեռած պի-  
տի մնայ՝ նոյն օրուան նստէն տեսարան մըն է, աչ-  
ուելի կերպով գոհնիլ՝ որուն զգուած տկամտեան  
եղոյ : Փափագեան իր տեսութեան լավային պոթ-  
կումն մէջ պոսպակած՝ «գաւաթ մը ջուր» պոսպա-  
րարտանքի մը. կենթադրէր թերեւս որ չարսխա-  
լաւան ջուր բերուէր աղգ. ժողովի տեսնախօսներուն.  
—մեր պատգամաւորները վարժուած չէին այդպիսի  
չփացումներու : Բարասանը, քիչ յետոյ, կը ճեղքէր  
աչա պատուարման ժողովը, և հանդիսաւորէր գէպի  
երեսփոխան էֆէնտին կը յատկանշար, ձեռքը բը-  
նած հակոյ, այլանդակ մօռուբա մը՝ ճշմարիտ ab-  
revoir մը, Ռատտակն . . . :

«Ընդհանուր քրքիչ, զայրայիլի միմունջ» ըսած  
պիտի ըլլայ նստին տեսնադրութիւնը, և եթէ հա-  
ւատարիմ՝ աւելցուցած պէտք է ըլլայ նաեւ .

—Ս. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՅ. (զուտ խոսքով «մօռ-  
ուբա») ին մեջ զոր երկու ձեռքով սնչալուած է բըռ-  
նելու : Աս ալ շատ է մեզի համար . . .

Եկեղեցիին բոլոր շրջանակին մէջ գտնուի մը  
չէին գտած, — փնտռած էին — և տեսի իրենք էին  
ժողովուրդ-աղբոր մօռուբան, որ պատմական անթի-  
նաւն բան մը կը դառնար տոտով :

Պատշաճութեան, վայելչութեան զգացումի մէջ  
վիրաւորուած՝ արտօնած, կատարած էր դարձեալ  
նի մօրթիս տակ : Հաղիւքսուորդ հարձած, անձեւ  
գրովն ու կտայտ մեկտալ յողում մը կը մտնէր  
ուր, նորքնայ գրովի մը ամբարշտաւորութեան չէի  
բաշտած ըսելու ինչ որ կը մտածէի «պատմաւորութիւն»  
ժողովուն վրայ, և խիզ՝ չէի բրած կատարելն  
նշաւակելու ընդգլխախօս երեսփոխանին «նենգաւոր  
ընդամարտութիւն»ը :

Եւ հետեւեալ օրը շունչս Զաքարիայ արի,  
Զեմպիւլի խան, ուր պիտի տեսնէի «Լոյս»ի խմբագ-  
րաւորը : Զեմ գիտեր, ճանչցար Միքայի Գափաւա-  
նեանը որ անկից ի վեր դէպ ի լուսաւորչի աշխարհ  
մը մեկնեցաւ : Յօշուածս հիւրասիրելու. յարմարա-  
գոյն լրագրագետն էր ինք, ջերմ կուտակից «ԵՅԷ»  
Պատրիարքին, ցնոր տնօրէնութիւն . . .

«Յարգոյ խմբագրագետ տէ՛րը խանին բակը  
գտայ, ցած անոռակի մը վրայ յուրաբար վառած  
նստած. համբիշք ձեռքը՝ Զեմի խուսափի բարբի մը  
կը դիտէր : Երբ իրեն մօտեցայ, անշուշտ նոր բա-  
ժանորդ մը կարծելով զիս՝ մարդուկը, վառվառ,  
վեր առաջնորդեց, շնորհ ու մղձոտած խաւց մը  
«ԼՈՅՍԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ»ը :

Յայտնեցի այցելութեան շարժումի մը, յօգուած  
կը բերէի իրեն փոխանակ բաժանորդագրի, և կար-  
ձեմ, «Երբեք պատրանք կրած ես» հարաւաւոր  
վերնագիրը այդ թուականէն մօտաւ մեր գրական շըր-  
ջարեւորութեան մէջ : Կարգայ սակայն ձեռագիրս և  
դիտելով «այբ»ի ողորդմը զոր փափագեան անու-  
նին անխուսափելի կրկնութիւնը առաջ բերած էր  
գրութեանս մէջ՝ մտածկոտ միմունջ .

—Այս փափագեանը շատ «այբ» կուտէ կոր յօգ-  
ուածնուդ մէջ . . .

—Ժողովքի մէջ ալ Ներսէսի միտք . . . յարեցի  
մեզմիւ :

Ժպտիլ փորձեց դժբաղդ մարդը, և տաւնայ  
խանդի, երկուքնոյ մը երկնայնելով գրաշարին .

—Գնա՛, քառուռն փարայի «այբ» ա՛ռ, — և  
յետոյ, աւելի ցած, ինձմէ անընդի ըլլալու դիտու-  
մով — քառուռն փարայի ալ հայտի բանին ճեղքապի . . .

ԱՆՅՈՐԴ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ կայսրը, աւանդական «պաշտ-  
պանը» արեւելքի քրիստոնեաներուն, 1500  
րուպլի զրկեր է ձէվատ փաշային՝ բաշխուե-  
լու համար Կրէտէի կարօս . . . իսլամներուն :

—Կ. Պոլսէն յաջորդաբար հասած Ռիւդե-  
րի և Հալապի հեռագրերը ծանուցին շարժուս

սկիզբը թէ Թուրքիոյ և Յունաստանի միջեւ հաշտութեան պայմանագիրը ստորագրուելու ընկեր է, ուսկից կը հետեւցուի թէ վաճառականութեան ու նաւարկութեան վերաբերող յօդուածը որ վէճի առարկայ եղած էր երկու կողման պատուիրակներուն միջեւ, ընդունուել է փոխադարձ զիջումներով: Հաւանաբար, պայմանագրին տրամադրութիւնները մեծ մասով Յունաստանի աննպաստ ըլլան, քանի որ յաղթուած կողմն ան է և հելլէն դահլիճը՝ նոր դժուարութիւններ չի յարուցանելու զգուշութեամբ, միշտ զիջողութիւններ ընդունելու տրամադրութիւն ցոյց տուաւ: Եւ ուրիշ կերպ կարելի չէր արդէն, քանի որ իրական պաշտպանութեան նմոյշ մը իսկ չի տեսաւ եւրոպական տէրութիւններէն. ընդհակառակը: Պ. Չայիմիսի նախարարութեան կը մնայ հիմակ՝ ելմանական քոնգրէսի ծրագիրը խորհրդարանին քուէարկել տալու հոգը:

— Ընկերացի փաշա գրեթէ Եղբարի ի Վ. Պալիս, ինքեղբայր որ զինքը ետ կանչեն Կրէտէնէն: Իր խօսքով՝ ծովակալները կապտած են իր գործերը (ս) ազատութիւնը և աւելորդ է իրեն մնալ պաշտօնի մը մէջ ուր որ և է նախաձեռնութիւն չունի:

Նախկին Սատրապմին վերագրուած ձեռնարկութեան լուրը իրաւ ըլլայ կամ ոչ, սա ակնհայտ է թէ Կրէտական հարցը քայլ մը իսկ առած չէ դէպ ի լուծում, և եթէ ստուգիւ ծովակալները չեն թողուր որ ձեռնարկ փաշա ուղածն ընէ կղզիին մէջ, տէրութեանց մեծագոյն մասն՝ ընդհակառակը՝ բնաւ ուժ չեն տար ինքնօրինութեան հաստատման: Կ. Պոլսոյ դեսպաններէ սմանք հիմակ ալ կուզեն նոր խաղ մը խաղալ. Ռուսիոյ ու Ֆրանսայի ներկայացուցիչները աւաճարկեր են որ Յունաստանի քոյր-կղզիի մասին տրուելիք որոշումներուն մէջ այլեւս միաձայնութիւն չի փնտռուի, այլ մեծամասնութիւն. այս կերպով, կը յուսան մինակ թողուլ Անգլիան և Իտալիան, իրենց կողմը չահելով Գերմանիան ու Աւստրիան: Բայց խօսքերնին չեն կրցեր քաւելցուել:

Եթէ չի ձանձրացար Կրէտէի կառավարչութեան ընտրելիներու անուններ կարգաւորողները ասուպներու պէս պահ մը կերեւան ու կը մարին, յիշենք նորագոյնը... սպասելով յաջողութեան: Վիեննայի հելլենական նախկին գետական հանգուցեալ Իրենլանթի իշխանի յորդին, որ Վալաքիոյ հին գերդաստանէ մը սերած է, կրօնքով յունաբան: Վիեննայի գլխավոր լիճը առաջ կանցունէ այս իշխանին անունը՝ ի դերու հանելու համար Պաթէնպէրլի Եօսէֆ իշխանին ընտրելութիւնը զոր Ռուսիա կը հովանաւորէ: Կրէտէի բարեւարակութեան վրայ իրապէս մտածող չի կայ, ինչպէս կը տեսնենք. տէրութեանց միջեւ դիւանագիտական անվերջ պայքարն է որ առաջ կը տարուի այդ պատրուակին տակ:

— Բոսֆորէ հետեւեալը կարտատուէ եւ ըրպական թերթէ մը. «Իրան հպատակ ժողովուրդները, առանց ազգի և կրօնի խնայողութեան, հրաւիրուել են նպատակ տէրութեան գրաւման պէտքերուն: Թէեւ կամաւոր անունը կը տրուի այս նորահաստատ տուրքին, սակայն չի մասնակցողները կը նշանակուին իրեն ըմբոստ և վախճալով թէ առաջին

առթիւ որ խնդիր մը ունենան իշխանութեանց հետ՝ իրենց մերժումը սուղի չի նստի իրենց, կը հարկադրուին «ցնծալ»: Այսպէս, լազմաթիւ ընտանիքներ իրենց անհրաժեշտ պէտքերէն կը զրկուին, գէշ արձանագրութիւն մը չունենալու և առիթը ներկայացած ատեն անողորմ կերպով չի պատժուելու համար:»

— Աւստրիական Լոյտի Տիանա շոգենաւը անցեալ ուրբաթ օր ընկղմել է Կ. Պոլսոյ նաւահանգստին մէջ անգլիական Անգլիոյ շոգենաւին կողմէ ընդհարման մը հետեւանօք: Տիանան, երկու հարիւրի մօտ ուղեւորներով ու աւելանքով լեցուն, կը պատրաստուէր ճամբայ ելլել դէպի Սեւ ծով, երբ Անգլիոյ շոգենաւը Մարմարայէ կողար, հասանքին սատուութեանէն մընաւած ու միանգամայն իր նաւապետին անխահմութեամբ ու անճարակութեամբ, ուժգնապէս զարնուեցաւ Լոյտի շոգենաւին որ լայն ճեղքուածքէ մը սկսաւ շուր առնել ու արագապէս ընկղմիւ: Տիանան նաւապետին ու նաւազներուն գերմարդկային ճիգերուն չնորհիւ, բոլոր ուղեւորներն ազատուեցան ու մարդու կորուստ չի կայ: Ապրանք, գոյք և գրամ՝ ոչնչացած են: Փոքր Ասիոյ ծովեզերեայ քաղաքները զրկուելիք դրամածրարներու գումարը միայն կը հասնի 50,000 ֆրի, իսկ վաճառականաց ապրանքներն, ապահովագրուած կամ ոչ, 4000 անգլ. ոսկի: Աստիցմէ բան մը աշատուած չէ: Լոյտը դատ բացած է ազլ. ընկերութեան գէմ, արդելքի տակ առնելով Անգլիոյ շոգենաւը:

— Պոլսոյ թուրք թերթերը կը փութան հերքել Սրահսարի թղթակցին այն լուրը, թէ վերջերս 600 հայեր ձերբակալուած է ստիկանութիւնը:

## ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

Ք.

### ՕՐԹԱԳԵՂՑԻՆ

Յոյներուն պէս իրենց հին պատմութիւնովը կը պարծին և գրեթէ անով իրենց գոյութեան իրաւունքը կանխեն Օրթագեղցիները:

Տիկանիսի հայրենակիցները տան տան, աւան պարագայի մէջ, միշտ, շարունակ իրենց Հոմերոսը, Բէրթէլսը, Տիւրքը, Տրուպան, Միտոփը, Թէրմոփիլը մէջ տեղ կը գնեն: Օրթագեղցիներն ալ Պալան Յակոբ պէյը, վերակենդանութեան թանգարանը, Արամեանի տապանը, Պէշիքիաշէնի տունը, Ներսէս Պատրիարքին մահը, Լատրանի փայլուն ժամանակը, Հայրապետ աղան, Մաթթէա Պատրիարքին սարկաւազութիւնը, Մարտոս ամիրային՝ Գէորգ Կաթողիկոսին ընծայ քրտն գաւազանը, Խաղէշ ամիրային եկեղեցի երթալը, Յիսին, Արեւելին հիմարկութիւնը, Էմմէնի պաշտի տաղանքները, Թաշ Նէրոփլին հրդեհը, Նազը հանը, Ճանիկ ամիրային Երուսաղէմ երթալը, Միսիս Ժանը, Պարոնեանին կեանքը, Մելիքար Յակոբ Աշոյի տղեցուծութիւնը և Երուսաղէմի Տիգրան Էֆէնտիին Զօրի տիմանց վարժարանին մէջ երեսուն տարի պարտաւոր միւնոյն տոնոսփոսութիւնն արտասանելը:

Եւ իրաւունք ունին Օրթագեղցիները այդ իշխաններով պարծենալու, որովհետեւ եթէ Օրթագեղցին վերցունեն ատոնք, այսօր ուրիշ բան չի մնար հոն՝ բայց եթէ տեղ մը, Տէր Սահակը, չաւալը, գորտուի Պարսիքը՝ Գորգէն, և թիւթին՝ Դի Տիգրան աղան:

Կինները շատ համակրելի են, իսկ երիկ մարդիկ կամ Շիրքէթն են և կամ Օսմանեան Պարսնը: Մարտը աշխարհաբար կը խօսին, հակառակ Գորգէնի հոն բնակելուն:

Զգայելի, բարեկրթ, յառաջդիմաւոր, խօսուն, աչքը բայց, աշխարհիկ և բանաստեղծ ահա՛ Օրթագեղցիին նկարագիրը:

Պոլսոյ ամբողջ բանաստեղծ շարժումին mo-teur Օրթագեղցի Միտոփիսի խանութը լարուած է:

Ամուսին մը իր կնոջ յի մնացած ըլլալը կամ Միտոփիսին կիսանայ և կամ թիւթին՝ Տիգրանին, երբ արդէն այդ լուրը ամբողջ գեղին հաղորդուած, ընկած է:

Օրթագեղցի երեք մասի կը բաժնուի. Թաշ Նէրոփլին, Տէրէն և Եալընները:

Տէրէն լուրը կ'ստեղծեն, Թաշ Նէրոփլինը կը բանաստեղծ և Եալըն կը չարախօսեն:

Կատրոններու ֆօֆիին և Օրթագեղցիներուն բանաստեղծ hors concours են աշխարհիս վրայ:

Եթէ Օրթագեղցին իր գործերուն վրայ այնքան սիրտ հառցընէր որքան ուրիշներուն գործին կը հասցընէ, այսօր Օրթագեղցի... Գառնաղբիւ մը կը լլար:

Միջազգայն ուրիշ գեղերուն վրայ սա առաւելութիւնը ունի որ Կատարայիներուն ոտք կ'սկսէ չի տար և ասոր համար է որ իրեն յառաւի cachet մը ունի զոր ուրիշ տեղ չես գտներ: Կեղծ բարոյականը գործ չունի հոն, ահա ինչու թէ՛ երիկ մարդիկ և թէ՛ կինները կամ բարոյական ունին և կամ ոչ. բայց երբ չունին՝ ունենալ չեն կեղծեր:

Երկուսն երկատարութիւնը պարկեշտ է, նայն իսկ շատ պարկեշտ, բայց այս ամսականը քիչ մը տարբերութեան համար գործածել շատ ճիշտ չի սխալ ըլլար:

Օրթագեղցիները Աւետարանին սա երկու բուններուն շատ դարձուած են — Սիրեյէթ դիմեանա: — Քսան տարի ետքը Թօր-Կափու ալ ասանկ պիտի ըլլայ. Օրթագեղցի քիչ մը անապարած է, voilà tout:

Օրթագեղցի կինը անսպասուած ամեն իրիկուն եկեղեցի կ'երթայ Խնդրատարին ստշել ծնունդը համար, հետեւաբար ինքն իր կարգին խնդրատար է... որքան որ իր կարգութիւնները կը ներեն:

Տարեկան պարահանդէսները դադրելն ի վեր Օրթագեղցի հոգեւար է. իսկ երբ Միտոփիսն ոտքերը տնկէ՝ Օրթագեղցի պիտի մեռնի և ապիկայ մեղք պիտի ըլլայ օրովհետեւ հակառակ իր ամեն թերութիւններուն, այդ կրթութեամբ թաղը միայն է որ կ'ենքը համով է իր սահմանափակ վիճակին մէջն իսկ:

ՌԱՏԱՄԵՍ

## ԱՅԺՄԵՆԻԹԻԻՆ

ԱԼԿԱՆԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻԻՆԸ

Հակառակ Պոլսոյ բոլոր մամուլին յայտարարութեանց, թէ «Առնալոսները հաւասարիւ հպասակներ են» եւ թէ «անոնց բնական գաւառներուն բարեկարգութիւնը խանգարող ո՛րեւէ դէպք չէ պատահած», աշխարհական ապստամբութիւնը կը շարունակուի ու կը զարգանայ: Եւրոպական սկզբնապատճառ կը համարուի Կ. Պոլսէն Բրիգրէնի իշխանութեանց զրկուած խիստ հրամաններ ի մասին տրոյ հաւաքման ու զինուորագրութեան: Ժողովուրդին մէջ վաղուց կեցած դժգոհութիւնը, որ միսիսի սակ ծածկուած կրակի կը նմանէր, պոռկաց այս պահանջումներուն առջեւ: Աշխարհացիներն, որոնք զինուած էին սողնակ, հաւաքմանը եւ իրենց պէս ընտելցիւ Մոնթագեշա անուն անձը, զոր Դուռը փորձեց սիրաշահիլ: Աշխարհացիներն, աւելի խելացի շարժելով, հրահանգ տուին իրենց պէսին որ բանակցութեան մեկնէ ձեռացունէ, զինուորական զօրութեանց առաջնորդ յայտնացունէ շաշու համար: Այս հեւաքը յաջողեցաւ կասարեշայն: Սեւանիկի ու Պիթիոյի իշխանութիւնները որոնք կը պատահանուէին քանի մը վաշտ զօր փոխացունէ ապստամբութեան

վայրը, երկու օր ետք հակահրաման ստացան սպանելու. քանի որ ետք միայն կրկին հրաման հասաւ, երբ աշխարհացիները զօրաւոր թիւ մը կը կազմէին արդեն, կազմ եւ պատրաստ դեմ դնելու:

Պաշտօնը եւ Դուռը կոստենով շարժումին ծանր հետեւանքները, յանձնաժողով մը ծանրայ հանեցին որուն գոյիս կը գտնուի պաշտօնական պաշտօնատար մը, բնիկ աշխարհացի, ոչ իր ազգակիցները համոզել պիտի փորձէ. յանձնաժողովը պիտի աշխատի իրենց տեղը վերահաստատել տեղական իշխանութիւնները, ուսկից կը հետեւի թէ ծանրութեամբ կամ փախած են անոնք:

Ապստամբական շարժումը դեպի հին Սերայիոյ ու վերին Աշխարհիոյ կողմերը տարածուելուն, Սերայիս հարկադրուել է իր ռահմանագրութիւնը զօրեւն աւելցնելու: Պաշտօնական աշխարհացիական միջոցներ ձեռք կառնէ:

Հիմնական դժուար է գոյակել թէ Պաշտօնական իշխանութեան յանձնաժողովը պիտի յաջողի՞ խոստումներով ու քանակաւորութիւններով կատարել շարժումը, թէ ոչ գտնուի ու աշխարհացի կոստենով պիտի որոշուի աշխարհացիներուն ծանրագոյնը որոնք շատեց հետեւանք են ինքնօրինակութեան:

#### ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌՈՒՆԻՆԵՐ

ՅԱՐԻՉ, 7 դեկտեմբեր — Ռուսական զեւապան Պ. Մորէնայով կը թողնուի իր պաշտօնը, և իրեն կը յաջորդէ Պրիւսէի զեւապան Ռ. Բուրմիստով:

ՀԵՌՈՒՆ, 7 դեկտեմբեր. — Հայաստանի իշխանութիւնը հրաժարական տուաւ: Ուսկից թափառուելու Ռուսական զեւապան յանձնեց վերականգնել գայն:

#### Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Երեկուան Բոսֆորի մէջ կը կարգանք հետեւեալ տխուր տղերքը:

«Մէրթիի միջադէպին լուծումը, որ Դրան համար ստորնացուցիչ եղաւ, Փոքր-Ասիոյ իսլամ ժողովուրդին մոլեռանդութիւնը զրգռուած է: Բայց որովհետեւ թուրքերը չեն համարձակիր բան մը ընել եւրոպացիներուն դէմ, կայսրութեան անկարողութեան և իրենց իսկ թշուառութեան վրէժը տարաբաղդ հայերէն կառնեն: Այսպէս, չորս հանգարտաբարոյ հայեր սպաննուել են Հաճընի մօտերը:

«Ընդհանուր կերպով, խառնաշփոթութիւն կը տիրէ ի Փոքր-Ասիա և քրիստոնեաներն ամենամեծ վտանգներու մատնուած են»:

Մաղթենք որ այս վերջին չափազանց յուռետես գուշակութիւնը, զոր վերապահութեամբ կարտատպենք, իրականութիւն գըտնելէ բոլորովին հեռի ըլլար:

Երուսաղէմի միաբանութիւնը որոշեց է եպիսկոպոսական վկայագիր տալ Կ. Պոլսոյ իր պատրիարքական փոխանորդին՝ Տ. Գէորգ Ծ. Վ. Երէցեանին ի վարձ անոր բաղմամբայ ծառայութեանց: Տ. Գէորգ վարդապետ այս առթիւ ընդունեց է շնորհաւորական այցելութիւններ ամեն կողմէ: Տակաւին որոշուած չէ թէ երբ պիտի ուղեւորի Ս. Էջմիածին՝ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու:

Հ. Բառնաբաս եպիսկոպոս Ազգայնորդեան, Հռոմէական Հայոց Եպիսկոպոսի առաջնորդը, որ ամբան եղանակը Աղեքսանդրիա անցու-

ցած էր, երկուշաբթի օր Գահիրէ վերադարձաւ:

Երէկ, ժողովրդական սգաւոր բազմութեան մը շրջապատով, հողին յանձնեցին մարմինը պանդոխտ երիտասարդի մը, Պ. Յիւզանդ Փափագեանի, որ կարծաւոր հիւանդութեան մը զօհ դնաց: Հանգուցեալը, բնիկ Արմատանցի, աւելի ծանօթ էր «Պատուելի» անունով, երաժիշտ դասաւորու եղած ըլլալով իր ծննդավայրին մէջ, ու յետոյ անձնուէր գործիչ մը՝ բանիցս մահուան վտանգներէ անցած: Պարտաւորեալը զինքը մզած էին Եպիսկոպոս, ուր պարկեշտօրէն կաշխատելու իր օրապահիկը ճարելու:

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Առաջն. Տեղապահ Հօր Նախագահութեամբ որ սրտայայտ բարոյ մը խօսեցաւ: Եկեղեցւոյ ընդին մէջ ալ դամբանականներ կարգադրեցին երիտասարդ մը ու օրհորդ մը:

Դադարեալ եկեղեցական թափօրով մինչեւ Մուսթիի լեռանը տաւջնորդուելու ետք, փոխադրուեցաւ Մարմինայի աղբ. գերեզմանատունը, ուղեկցութեամբ բազմութիւն յուզարկաւորներու:

Գերեզմանատուն մէջ եւս յազեալ շեշտերով դամբանական մը արտասանեց տարաբաղդ Պատուելիին բարեկամներէն մին:

Հանգուցեալը 31 տարեկան էր. կը թողու այլ ինչ ու ոչ զաւակ մը Արմատանի մէջ:

#### ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խոիվը շաբաթ իրիկուն Մոնթիւզի ուղեւորեցաւ ուր կը գտնուէր մինչեւ երէկ: Այսօր Գահիրէ կը վերադառնայ Նախագահութեան համար Նախարարաց խորհուրդին որ վաղը պիտի դումարուի Ապտինի պալատը:

— Ելմանական Նախարարութիւնը խնդրած է Հանրային Պարտուց վարչութեան որ այս տարի ալ 250,000 սակի կանխավճար մը ըլլայ իրեն՝ Ստորին Եպիսկոպոսի դաշտերը ցամաքեցնելու գործողութեան համար:

— Գիշերը փաշա Մասաւայէն վերադարձաւ: Կըսուի թէ մտադիր է Պէրպէր ուղեւորիլ՝ յառաջիկայ արշաւանքին Նախապատրաստութիւնները տեսնելու, բայց թէ այս մասին անհամաձայնութիւն ծագած ըլլալով իր և Լորտ Գրոմըրի միջեւ, խնդիրը Լոնտոն ներկայացուել է:

— Պոլսոյ փաշա Նուպար Նոր տեսակ արտի մը գիւղը ըրած է որուն համար արդէն հնարքի արտօնագիր (brevet) ստացած է Անգլիոյ և Ֆրանսայի մէջ և այժմ բանակցութիւններ կատարելու վրայ է Գերմանիոյ մէջ ալ ընդունել տալու համար անոր գործածութիւնը:

Այս գիւտ՝ որ մեծ բարեփոխում մը պիտի առաջ բերէ մշակութեան մէջ, պատիւ կը բերէ զայն հնարող հայուն ճարտարարուեստական տաղանդին:

— Յոյներու Աղեքսանդրիայի հարկաւորման Պատրիարքը, Տ. Սոփրոնիոս, Գահիրէ եկած է քանի մը օր մնալու:

— Երկաւորական Թրամուէյի ընկերութեան գանձապետը 1,500 սակի շրթերով փախած է:

— Գերմանիոյ դիւանագիտական նորընտիր գործակատար Պ. Միլլէր Գահիրէ կը սպասուի ի մօտոյ:

— Ահմէտ Փուլատ և Շէյխ Լուիֆի, ուրոք Բարձր. Խոիվին դէմ դրուագ մը գրած ըլլալուն համար դատապարտուած էին տեղական դատարաններու կողմէ, իրենց դատին

վերաքննութիւնը պահանջած են վճարելու տոնէն:

— Խոիվական թատրոնին մէջ՝ օրհրայի իտալական խումբը յաջողութիւն յաջողութեան վրայ կը դիզէ ամեն գիշեր:

Ամեն մէկ ներկայացման, հարիւր հոգիի մօտ բաղմութիւն մը ստիպուած է ետ դառնալ տեղ մը չի կրնալ գտնելուն համար:

Խումբին առաջին դերակատարները, նուազածուներու և պաշէի խումբը ամենէն խոստապահանջները գործացնելու աստիճան կատարեալ են և տրուած օրհրանքները անքննադատելի կերպով բեմ կը դրուին:

Ռիկորդէթթօի ներկայացումը, երէկ գիշեր, պարզապէս հիանալի էր. օրհորդք Թօրէզէլը և Պասթիա, Պ. Պ. Մէնթի, Բանտօֆի-նի և Տիտուր, խաղին դիւստր դերակատարները, մինչեւ վերջը ծափահարուեցան իրենց գեղեցիկ ձայնին և խղճամիտ դերակատարութեանը համար:

Այս գիշեր հանգիստ. վաղը գիշեր երկրորդ ներկայացում Ռիկորդէթթօի:

#### ՕՐԱՑՈՅՑ

1898 թ ՌԱԿԱՆԻՆ

Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան կողմէ պատրաստուած այս Օրացոյց կը ծախուի Փարոսի սպարանը ի դին 60 փարա ողջ:

ՏՕՔԹՕՐ Ռ. ՄԱՐԴՆԵՐ, վկայեալ Վիենայի բժշկական Համալսարանէն ուր աշակերտած է բրոֆէսոր Պիլլերոսի և Նօթենկէլի, և որուն մասնագիտութիւններն են՝ ներքին հիւանդութիւններ, վիրաբուժութիւն և կանայի օրտեսութեան բուժում, հաստատուած է ի Գահիրէ: Կը գտնուի ամեն առաւօտ ժամ 10էն 11 ժամուս Սիւրսոյ գեղարանը, Գոթի գործակալութեան կից, և ժամ 11էն 12 Պ. Առաքեանի գեղարանը: Իսկ կէսօրէ ետք ժամ 2էն 4 1/2 հիւանդ կընդունի իր տունը Շարա Ապա-էլ-Աղիլ, թիւ 28: 1—4

#### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ամբողջ ֆրանսական մամուլը ու ժողովուրդը ամիսներէ ի վեր բուռն հետաքրքրութեամբ և կրքոտ կերպով կը դեպի Տրէյֆիւսի խնդրովը: Կը յիշէք անշուշտ որ կընդունուի հրեայ՝ ազգութեամբ ֆրանսացի այս հարկաւորապետը 1894ին ամբաստանուեցաւ թէ ֆրանսական բանակին, որուն մէջ կը ծառայէր, յատակաձեւերն ու գաղանխները գերմաններուն կը ծախէր, թէ Գերմանիոյ ծախուած լրտես մըն է: Պատերազմական ատենի մը առջեւ դատուեցաւ, գոնիակ նիստի մէջ, առանց դատավարութիւն հրատարակուելու, և դատապարտուեցաւ իր զինուորական աստիճանէն զրկման ու բերդարգելութեան: Սասանայի կողմէն արտօրուեցաւ, ի Կիւյանա, ուր կը պահուի ամենախիստ հսկողութեան տակ: Տրէյֆիւսի ընտանիքը, բարեկամները, պաշտպանները չէին դադարած սակայն բողոքել թէ կողմնակցութիւն ու անիրաւութիւն տեղի ունեցած էր ամբողջ գործին մէջ, թէ ուրիշ զինուորականներ կային մեղապարտ զորս անաչառ քննութիւն մը երեւան պիտի հանէր: Ականջ կախող չեղաւ:

Այս անգամ խնդիրը նորէն արժարժուե-

ցաւ, Երեւանի գերատնտեսութիւն Պ. Շէօ-  
րէր Քէմպի մէկ անպաշտօն զեկուցման  
վրայ թէ ինք կարեւոր յայտնութիւններ ունի  
ընդերք որոնցմով պիտի հաստատուի թէ բարձ-  
րաստիճան սպաներ մատ ունեցած են գոր-  
ծին մէջ և թէ Տրէյֆիւս անմեղ է: Պրան-  
սացիները նորէն բռնկեցան, այս անգամ ու-  
ւելի կատաղի կերպով: Երեւանի գեր-  
ատնտեսութիւնը ասեց թեման հասանք մը  
հրաւիրեց իր վրայ ու մինչեւ իսկ լուե-  
ցաւ ու դրուեցաւ: Թէ հրեայ սեղանա-  
ւորներէ խմբակ մը կազմուած է Տրէյֆիւսի  
պաշտպանութիւնն ստանձնելու համար: մա-  
մուլը երկու մասի բաժնուեցաւ որոնց մէկը,  
փոքրամասնութիւնը, Պ. Շէօրէր Քէմպի  
կողմ կը բռնէր՝ պահանջելով որ նոր քննու-  
թիւն ու նոր գատաստան տեղի ունենայ: մին-  
չեւ իսկ էմիլ Զօլա խառնուեցաւ այս վեճին,  
Ֆիլիպոսի մէջ յօդուած մը հրատարակելով,  
իր ոճով տեսակ մը հոգեբանական տեսու-  
թիւն ի պաշտպանութիւն Պ. Շէօրէր Քէմ-  
պի որուն վարմունքը աղելու ու վեհանքն կը  
գտնէր: Ռոջօր, իր թերթին մէջ, պատաս-  
խանեց Լուրսի հեղինակին: Այս միջոցին,  
հետզհետէ հրապարակ կը նետուէին ֆրան-  
սացի զինուորականներու անուններ՝ իբրեւ ա-  
նուգլակի յարաբերութիւն ունեցած անձեր  
Տրէյֆիւսի հետ կամ թէ, ընդհակառակն  
անոր անմեղութիւնը հաստատուելով վկայու-  
թիւններ ունեցող: ասանք յաջորդաբար կը ներ-  
կայանային պատերազմական նախարարին, ու  
ընդ իրաւասութեան տակ կը գտնուէին, հեր-  
քելու համար իրենց վրայ ըստաժները: մին-  
չեւ իսկ Թունուզէն Բարիզ բերուեցաւ տե-  
ղակալ-գնդապետ Բիքառ, նոյնպէս հարցա-  
քննութեան մը բովէն անցնելու, որուն ժա-  
մանումը օրուան մեծագոյն գէպըն էր ի Բա-  
րիզ, նախորդ շաբթուն:

Պրանսայէ դուրս, գերմանական թեր-  
թերն ամենէն աւելի դառնեցան այս հրատապ  
հարցով, որ իրենց ալ կը դաշէր: Պահ մը,  
բարիզեան թերթերը Գերմանիոյ կայսեր ա-  
նունն իսկ խառնեցին գործին մէջ, իբր թէ  
Վիլհելմ Բ. ժամանակին ձեռնարկներ ըրած  
ըլլար ի նպատակ Տրէյֆիւսի: Այլեւայլն Զայ-  
քունկ փութաց հերքել այս ամբաստանու-  
թիւնը:

Հանրային կարծիքն այն աստիճան գր-  
գռուած էր ի Պրանսա, որ ինքիւրը երեսփո-  
խանական ժողովին ատենան հանել անխու-  
սափելի դարձաւ, վրան զի բանակին պատի-  
ւը խնդրոյ առարկայ եղած էր այս վեճին  
մէջ: ուստի հարցադրուած ուղղուեցաւ պա-  
տերազմական նախարարին:

Այդ նիստին մանրամասնութիւններն յա-  
ջորդ շաբթու միայն պիտի բերէ եւրոպական  
Սուրհանդակը, միայն թէ կիրակի իրիկուն և  
երկուշաբթի Բարիզէն յաջորդաբար հասած  
հեռագրեր կը հաղորդեն թէ երեսփ. ժողովը  
հարկ չէ տեսնել վերաքննել Տրէյֆիւսի դատը:

Աւստի քուէարկուած բանաձեւը որ ըն-  
դունուած է 63ի դէմ 313 ձայնով:

«Խորհրդարանը՝ յարգելով դատական  
իշխանութեան վճիռը՝ կը հաստատէ պատե-  
րազմական նախարար Պիլեօ զօրավարին յայ-  
տարարութիւններն ու կը դատապարտէ ե-  
պերիի պապարի մը մղիչներն»:

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԵՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ գեղարարին մէջ յաճախորդ-  
ները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործա-  
րաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով:  
Գեղագիրները ամենայն խնամք և ուշադրու-  
թեամբ կը պատրաստուին:  
Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ:  
Թարմ համալից ջուրեր, անուշահոտութիւնք եւն.  
բնական և մանրալիտական բնութիւնք:  
Գեղարարն կը յաճախեն հայ և օտարազգի ծա-  
նօթ բժիշկներ:  
Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց  
համար: 8—50


ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱԿԻԶԷԼԵԱՆ

Ա. Ղ. Ե. Ք. ՍԱՆ ԴՐԻԱ

Կը մասնաւորաբար ամեն ճեսակ ածուխ, մանա-  
ւանդ ՔԱՐԵՌԹ, անմրցելի գներով և գոհացուցիչ  
պայմաններով:  
Դիմել ի Սիմէլ Կեսիս:ս եւ կամ Հայոց եկեղե-  
ցին՝ Աղեմանգրիա: 3—5

ՏՕՔԹՕՐ Կ. ՃԵՐԱՀԵԱՆ

Տօրթօր Կ. Ճերահեան այս անգամ Գահիրէ  
հաստատուած ըլլալով, իրեն գիտող հիւանդները պի-  
տի ընդունի իր բնակարանին մէջ ի Շարա Քլօթ-Պէյ  
թիւ 2 (ժուրը՝ Աթֆէթ-իւ-Կինէն) ամեն օր,  
րաջի կիրակիներէ, առաւօտէն մինչեւ ժամը 3(3.Մ.)  
իսկ ժամը 3էն մինչեւ 5 կարելի է գինքը գտնել  
Արարատ գեղարարն ի Պէրի-Ուրէն, և 5էն 7 էօդ-  
պէթի վրայ Ֆարմաի տը ըս Պարս գեղարարն:  
2—8



ՃԵՐԱՀԵԱՆ ԵՒ ԱՅԼԵ ԼՈՒԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԴՈՐԾԱԾ ԵՑԵՑ

ԼԵՍՄԻՎՏԻԻ ԺԵՆԻՆ

Մայիսի եւ ժամանակի խնայողու-  
թիւն. — Մաքրութեան կատարելագոր-  
ծութիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — Ճերմակե-  
ղեններու եւ այլոց հակաճեղմում:  
ԿԱՐԵՌԹ. Լէսսի/ս/ի ԺԵՆԻՆ ԶԻ ՄԱՇԵՅՆԵՐ  
Եւրոպոյ եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիլ-  
սաքիսի սպառում. — Գործածութեան կերպը խիստ  
դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:  
Միակ ներկայացուցիչ յեղափոխ  
Կ. Վ. ԵԿԱԻԵԱՆ ԵՒ ԸՆԿ  
Դանիք. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ 16—24  
Le Gérant: D<sup>r</sup>. A. S. HAGOPIAN  
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Իրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՐ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳԵՆԵՐԱԼ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԳԻԾ

| Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք | Ժամանակ<br>1, 2, 3 ԿԳ. | Երկու<br>1, 2, 3 ԿԳ. | Երեք<br>1, 2, 3 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. |
|-----------------|------------------------|----------------------|---------------------|------------------|------------------|------------------|------------------|------------------|------------------|
|                 |                        |                      |                     |                  |                  |                  |                  |                  |                  |
| Գահիրէ          | մեկ.                   | 4 45                 | —                   | 7 30             | 8 15             | 9 30             | 3 30             | 4 45             | 7 15             |
| Պէնհա           | »                      | 8 —                  | —                   | 7 49             | 9 32             | 10 15            | 4 47             | 5 29             | 8 32             |
| Թանթա           | ժամ.                   | 11 28                | —                   | 8 30             | 10 30            | 10 55            | 5 45             | 6 7              | 9 30             |
|                 | մեկ.                   | 11 48                | 6 —                 | 8 34             | 11 15            | 11 —             | 6 26             | 6 11             | —                |
| Տամանհուր       | Երեկոյ                 | 3 10                 | 7 34                | 9 41             | 12 49            | 11 58            | 7 59             | 7 7              | —                |
|                 | ժամ.                   | 6 25                 | 9 15                | 10 45            | 2 30             | 1 —              | 9 40             | 8 7              | —                |

ԱՂԵՊՈՒՄԵՐԻՆ ԳԵՆԵՐԱԼ ԳԻԾ

| Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք | Ժամանակ<br>1, 2, 3 ԿԳ. | Երկու<br>1, 2, 3 ԿԳ. | Երեք<br>1, 2, 3 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. | Ժամանակ<br>1, 2, 3 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. | Երեք<br>1, 2 ԿԳ. |
|-----------------|------------------------|----------------------|---------------------|------------------|------------------------|------------------|------------------|------------------|------------------|
|                 |                        |                      |                     |                  |                        |                  |                  |                  |                  |
| Աղեքսանդրիա     | մեկ.                   | —                    | 7 —                 | 7 15             | 9 —                    | 9 20             | 2 30             | 4 15             | 6 15             |
| Տամանհուր       | »                      | —                    | 8 6                 | 8 58             | 10 2                   | 12 14            | 4 13             | 5 15             | 8 6              |
|                 | ժամ.                   | —                    | 9 12                | 10 28            | 11 —                   | 2 39             | 5 43             | 6 10             | 9 40             |
| Թանթա           | մեկ.                   | 6 15                 | 9 16                | 11 20            | 11 5                   | 2 49             | 6 30             | 6 14             | —                |
|                 | Երեկոյ                 | —                    | —                   | —                | —                      | —                | —                | —                | —                |
| Պէնհա           | մեկ.                   | 7 18                 | 9 59                | 12 23            | 11 46                  | 4 43             | 7 33             | 6 52             | —                |
| Գահիրէ          | ժամ.                   | 8 30                 | 10 45               | 1 35             | 12 30                  | 6 25             | 8 45             | 7 35             | —                |

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

| ԿԱՅԱՐԱՆՔ      |        |       | ԿԱՅԱՐԱՆՔ      |        |      |
|---------------|--------|-------|---------------|--------|------|
| ԱՌԱՍՏ         |        |       | ԱՌԱՍՏ         |        |      |
| Գահիրէ        | մեկ.   | 11 40 | Սիւէզ (բարափ) | մեկ.   | 9 50 |
|               | Երեկոյ | —     |               | »      | —    |
| Պէնհա         | ժամ.   | 12 28 | » կայարան     | »      | —    |
|               | մեկ.   | 12 33 |               | Երեկոյ | 3 30 |
| Զակաղիկ       | ժամ.   | 1 34  | Իսմաիլիա      | »      | —    |
|               | մեկ.   | 1 44  |               | »      | 1 20 |
| Իսմաիլիա      | մեկ.   | 3 40  | Զակաղիկ       | ժամ.   | 3 7  |
|               | »      | »     |               | մեկ.   | 3 17 |
| Սիւէզ կայարան | ժամ.   | —     | Պէնհա         | ժամ.   | 4 13 |
|               | »      | »     |               | մեկ.   | 4 17 |
| Տօք (բարափ)   | ժամ.   | 6 55  | Գահիրէ        | ժամ.   | 5 5  |
|               | »      | »     |               | »      | —    |